ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 192 Ա

„10" հոկտեմբեր 2024թ

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N23 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմում քաղաքացիների ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմում քաղաքացիների ընդունելության կազմակերպման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունելության օրը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում՝ ընդունելությունը տեղափոխել հաջորդ աշխատանքային օրը:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2020 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության ժամանակացույցը հաստատելու եվ Արարատի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ ՄԿ/205 -2019 կարգադրության 1-ին կետը ուժը կորցրած ճանաչելու մասին» N23 կարգադրությունը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

2024 թվականի հոկտեմբեր 10-ի

N 192 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ, ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Մարզպետ Սեդրակ Թևոնյանի մոտ՝ յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ չորեքշաբթի օրերին՝ ժամը 10.00-13.00 մարզպետի աշխատակազմի նստավայրում.
2. Մարզպետի տեղակալ Արտավազդ Նազարեթյանի մոտ՝ յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ երեքշաբթի օրերին՝ ժամը 10.00-13.00 մարզպետի աշխատակազմի նստավայրում.
3. Մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանի մոտ՝ յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ երեքշաբթի օրերին ՝ ժամը 10.00-13.00 մարզպետի աշխատակազմի նստավայրում.
4. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արթուր Մկրտչյանի մոտ՝ յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ երեքշաբթի օրերին ՝ ժամը 10.00-13.00 մարզպետի աշխատակազմի նստավայրում.
5. Ընդունելության հերթագրման հեռախոսահամարն է (0235) 2-52-16:

Восстановимая подпись

X

ՄԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Подписано: STEPANYAN MARINE 7709710131

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝
Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ